«Կառուպերվուդ ընդ Կո» ՍՊԸ -ի տնօրեն՝

պարոն Ա. Մկրտչյանին

---

cowperwood@yandex.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

09.01.2023թ կնքված թիվ ՏԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ԵՐԵՎԱՆԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ N 14 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Կառուպերվուդ ընդ Կո» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 09.01.2023թ.-ին կնքված թիվ ՏԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդը կարող է հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի, բացառությամբ հացի մատակարարման դեպքերը, որի համար ժամկետ է սահմանվում 60 րոպեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի, բացառությամբ հացի մատակարարման դեպքերը, որի համար ժամկետ է սահմանվում 60 րոպեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնորդի կողմից մինչ օրս չի իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Գնորդն ղեկավարվելով վերոնշյալ իրական հիմքերով միակողմանի (ամբողջությամբ) լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

«ԵՐԵՎԱՆԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ N 14 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ